

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք • Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւարանի բաւին 2 կոպեկ.
Տ է Լ Ե Ք • Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

ՄՇԱԿ

(25-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

Բ Ա Տ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի
Հասցեն. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ». Արտատպանից՝ ТИФЛИС, Rédaction «MSCHAK»

Ս օ ֆ ի ա և Ա Լ Ե Ք Ս ՈՒ Մ Է Ք Ս Ա Ն Ի Մ Ե Ր Ը յ ա յ ն ու մ են ա ղ զ ա կ ի ն ն եր ի ն և ծ ա յ ո թ ն եր ի ն, որ առաջինի մայր՝ և երկրորդի զբաղմունքը հանգուցեալ
Վ Ա Ր Վ Ա Ր Է Մ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ի
մասնին քառասունեակի օրվայ հոգեհանգիստը տեղի կունենայ Կոնիայի Նորաշէն Աստուածածանի եկեղեցում այսօր, հինգշաբթի, ապրիլի 17-ին: Պատարադի սկիզբը առաւօտեան 10½ ժամին:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմի փոփոխակի ազդեցութիւնը. Կաշառակերութիւնը կովկասում. — ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաթումից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւնները. Պատերազմի դաշտից. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պարսկաստանից.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈՓՈԽԱԿԻ ԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Բազմը փոփոխական է... Ապրիլի 10-ին յոյներն էին ցնծութեան աղաղակներով թողնում Աթլէքի փողոցները, իսկ ապրիլի 13-ին, ուրեմն երեք օրից յետոյ, ուրախութեան աղաղակները արդէն լսվում էին Երզրդ-Քէօսիկի ամուր պարիսպների ետեւից... Պատերազմական լուրերը մէկ յոյներին կամ յունասերների սրտերն են լըցնում զեղեցիկ յայտնով, մէկ թիւրքերին կամ թիւրքօթիւնների սրտերը...

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Յ

ԹԱՐԻՉԻ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Թաւրից, ապրիլի 2-ին

Անցեալ նամակում (ՎՄակիւ՝ № 41) խոստացայ հաղորդել թաւրիցի խառնակութիւնների շարունակութիւնը կատարում եմ խոստումս:
Ինչպէս յայտն է, ամբողջ դէպքի շարժառիթը եղել է Յովհաննէս անուհով մի ծառայող հայ: Այդ մասին ժողովուրդը շատ բաներ է խօսում, սակայն ամենից հաստատը այն է, — ինչպէս պարսիկ կինը ինքը խոստովանել է, — որ ինքը դրդված Լիւաւայի Ղարազով կոչվող փողոցի սէյիդներից, գնում պատահում է այդ հային, որ լըվելիկ (բանջարեղէն) էր առնում և ծախողի հետ սակարկութիւն էր անում թանկութեան համար: Պարսիկսէին օգտվելով առիթից սկսում է խօսել հայի հետ և վերջը զրպարտում է նրան իրանց հաւատը հայտնելու և անբարոյական առաջարկութեան մէջ: Կնոջ աղաղակի վրա հաւաքվում են մի խումբ թիւրքեր և ուղում են ծեծել հային, սակայն, բարեբաղդաբար, հէնց այդ միջոցին վրա է հասնում Ղաւաբէկ — օսմանկանապետ Սադըղը և աղաղակով հային փախցնում է դէպի Ղաւան ու տանում ուսաց հիւպատոսարանը: Դրա հետեւից արդէն զրեւ եմ անցեալ նամակով: Այստեղ չը մոռանամ յիշել, որ կայսերական բանիկի զի-

նե ճշմարիտ Ապրիլի 6-ին, երբ սկսվեց պատերազմը, և թիւրքերը յարձակում գործեցին յունաց մի քանի կետերի վրա, ինչպէս էին եղիւ-մարգարէի և Բայրախ-տաշի պահակները, յունաց զօրքը, մի կողմից կատաղած թիւրքերի այդ յանդգնութիւնից, և միւս կողմից զրգված զարեւոր վրէժխնդրութեան զգացմունքից՝ զրոհ առնելով մտաւ թիւրքաց հողը, երկու կէտում, այն է Միջին-Մակեդոնիայի և Եպիրոսի սահմանագծերի վրա: Թունաց զօրքի առաջին յարձակումը սարսափ գցեց թիւրքաց սահմանապահ զինուորի վրա, և մի քանի ժամից յետոյ արդէն Աթլէքում տօնում էին յունաց զօրակի յաղթանակը: Դա յունաց առաջին յաղթութիւնն էր:
Բայց ահա երկու օր հազիւ անցած, թիւրքաց բանակի զխաւոր հրամանատար Էջմէ-Փաշան, ոչ միայն յետ մղեց յունաց զօրքերին, այլ և զբաւելով Մելունի անցքը, անցաւ յունաց սահմանը, և թիւր-

քեցորդ ևս առաջին օրը մեծապէս նպաստել է քարվասարայում գտնվող հայերին, նրանց տանելով տները, և բացի այդ նա ազատել է մի ծեծված ու ջարդված հայի՝ թուրքերի ձեռքից:
Թագաժառանգը կարծելով որ այդ խռովութիւնների պատճառը եղել է նոյն իսկ ոստիկանապետ Սադըղը՝ հային փախցնելով դէպի հիւպատոսարանը, բռնել է տալիս նրան և բանտարկում, սակայն հնարձիւ մի քանիսների միջամտութեան, ոստիկանապետը ազատվում է բանտից և նայն իսկ մահվան պատիժից:
Վերադառնալով հայերից մէկը այս օրերս ցնորված ընկած է տանը, վախից էլ մի կին վիժել է երեխան: Հայերը, 200—300 տուն, մինչև այսօր էլ փակված են ուսաց հիւպատոսարանում և ոչ մի կերպ չեն համաձայնում այնտեղից դուրս գալ, այլ անպայման առաջարկում են ընդունել ուսաց հիւպատոսութիւնը, որի համար էլ այս վերջին օրերս մի խնդրագիր է պատրաստված նոյն այդ հայերի կողմից, խնդրագիրը կրում է մօտ 600 անձանց ստորագրութիւնը: Այդ խնդրագիրը այստեղի ուսաց ընդհանուր հիւպատոս Պետրովի միջոցով ուղարկվելու է Թէհրան վէլիեր-Մուստաֆին (Պարսկաստանի ուսաց զխաւորների խաչուցի), որպէս զի այնտեղից մի վերջնական պատասխան ստանան: Բուսաց հիւպատոսարանում ապաստանած հայերի մէջ աչքի են ընկնում իրանց նախաձեռնութիւններով երկու հայ կանայք՝ Քոչարի բաջին (ցնորված երիտասարդը պառաւ մայրը) և մասամբ Նամա բաջին:
Անցեալ անգամ զրեւ էի, որ հայոց վարդա-

քաց զօրակ բարձրացրեց Գրիգորում, հեռագրելով Կ. Պոլիս, որ արշաւում է դէպի Լարիս... Եւ այդ միջոցին Կ. Պոլսում տօնում էին թիւրքերի յաղթութեան առաջին ազդեցութիւնը:
Սակայն այդ էլ երկար չը տևեց: Ազատութիւն և թագաժառանգ Կոնստանտինի անունով ուղարկած զօրքը՝ հաւաքեց իր բոլոր ուժը և մի քանի օրից յետոյ, երկու գլխաւոր կետերում, թէ Արտայի մօտ և թէ Տիրնափօսի դէպքի վրա փառաւոր յաղթութիւն տարաւ, և յետ միջոցով սուլթանի զօրքը, կրկին անցաւ թիւրքաց սահմանը, մի կողմից դիմելով դէպի Եանիսա, միւս կողմից ձգտելով զբաւել Ելասոնի բարձրութիւնները, յոյս ունենալով շատ շուտով յունաց զօրակ պարզել Ելասոնի աշտարակների վրա: Զատից երեք օր առաջ էր այդ և քրիստոնէայ Յունաստանը պատրաստվում էր այդ ահագին ազդեցութեամբ վայելել քրիստոնէական ամենամեծ տօնը: Իսկ Կ. Պոլսում տիրում էր յուսահատութիւն: Սուլթանը, կատաղած, յետ կանչեց Էջմէ-Փաշային, և պատերազմի դաշտն ուղարկեց ռուս-թիւրքական պատերազմի հերոս Ղալի-Օսման-փաշային, այժմ 70 տարեկան մի ֆանատիկոս ծերունի...
Տեսարանը նորից փոխվեց, և այս անգամ շատ խիստ: Նոր գնդերով ուժեղացած թիւրքաց բանակը, յուսահատ Էջմէ-Փաշայի առաջնորդութեամբ՝ կատաղի յարձակում գործեց Մելունի անցքի վրա, գրաւեց բոլոր բարձրութիւնները, անցաւ սահմանը, մտաւ Թէսալիայի դաշտավայրը, հաւատ նշանաւոր Տիրնափօսը, և այնտեղից ուղղակի դիմեց դէպի գլխաւոր կէտը՝ Լարիս: Այդ անպայման փոփոխութեան լուրը տարածվեց ամբողջ Յունաստանում: Զատիկի օրը: Դա թիւրքերի երկրորդ և նշանաւոր յաղթութիւնն էր...
Ներկայումս պատերազմի բեմը ներկայացնում է հետեւի պատկերը. — յոյները Թէսալիայում յետ են մղված, և Լարիսան գտնվում է թիւրքերի ձեռքում: Իսկ արեւմտեան սահմանի վրա՝ թիւրքերն են յետ մղված յոյների ձեռքով, և զբաւած ունեն

անկողնադէս: Մակեդոնիան խաղաղ է: Բօլքարիան և Սերբիան չեն խառնվում պատերազմին, և ուրեմն ահագին թիւրքայի դէմ ստիպված է կանգնել միմիայն փոքրիկ Յունաստանը, իր փոքրիկ զօրքով, բայց վիթխարի ոգեւորութեամբ: Արդեօք նորից կը փոխվի պատերազմի բաղը, թէ Լարիսայի զբաւումը կը վճռի ամբողջ հարցը, — դա գուշակել զժամը է:
ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՏՈՒՄ
Կովկասեան նոր կառավարչապետ իշխան Գօլցերն հետամուտ է, ի միջի այլոց, վերացնել կաշառակերութիւնը, որ այնքան զարգացած է մեր երկրի վարչական ստորին ծառայողների շրջանում: Այդ գեղեցիկ դիտաւորութիւնը, որ կազատէ մեր ժողովուրդը մի մեծ չարիքից, կարօտ չէ բացատրութեան: Հարց է ծագում թէ ինչ հանգամանքների մէջ է ծնունդ առնում այդ չարիքը և ինչ միջոցներ կարող են արմատախիլ անել նրան: Իբրեւ պատասխան այդ հարցին, մենք կը բերենք մի քանի կտորներ «НОВОСТИ» լրագրում տպված մի գեղեցիկ յօդուածից, որ խօսում է Կովկասում ծագված կաշառակերութեան մասին:
Յօդուածագիրը միանգամայն ճիշդ է նկատում, որ կաշառակերութիւնը բացառապէս չէ կախված այն հանգամանքից թէ ինչ տեսակ անձնավորութիւն է պաշտօնեան, կամ ո՞ր ազգութեան է պատկանում: Կաշառք տալու սովորութիւնը դարաւոր է, մտած տեղական ժողովուրդի հասկացողութիւնների մէջ դեռ այն ժամանակից, երբ նա գտնվում էր թիւրքայի կամ Պարսկաստանի տիրապետութեան տակ, այսինքն այն ապակամող ազդեցութեան տակ, որ անում է բռնապետական կամայականութիւնը մահմետական երկիրներում, ուր չը կան օրէնքներ, չը կայ իրաւունք, այլ ամեն ինչ կախված է իշխանաւորի արամադրութիւնից: Գնե՛լ այդ արամադրութիւնը ընծաներով՝ ահա այն միակ միջոցը, որ մատչելի է հասարակ ժողովուրդին, ահա

